# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
# ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*21.05.2026թ.* *ք. Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի պետ արդարադատության գնդապետ՝ Ա.Պողոսյանս, ուսումնասիրելով թիվ 13913051 կատարողական վարույթի նյութերը*

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

*Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 20.08.2025թ տրված թիվ ԵԴ2/7832/02/25 կատարողական թերթերի համաձայն պետք է՝ Կարեն Փիրավաժի Մարգարյանից հօգուտ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲ ընկերության օգտին բռնագանձել 27.129.400 ՀՀ դրամ և հաշվեգրվելիք տոկոսներ, ինչպես նաև կատարողական թերթով հաշվարկվող տոկոսներ, ինչպես նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը որպես կատարողական ծախս:*

*Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել պարտապան Կարեն Փիրավաժի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող, գրավի առարկա հանդիսացող Կոտայքի մարզ, գյուղ Վերին Պտղնի, 3-րդ փողոց, 23 տուն, (սեփականություն, վկ. 13122024-07-0123) հասցում գտնվող անշարժ գույքի վրա, որը գնահատվել է 34,740.000 ՀՀ դրամ:*

*02.12.2025թ. Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Անահիտ Իսոյանի կողմից կայացվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշում և մեկնարկային գին է սահմանվել 26.055.000 ՀՀ դրամ:*

*Կատարողական վարույթի նութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կատարողական թերթում առկա է վրիպակ:*

*19.05.2026թ. Ծառայություն է մուտք եղել դատարանի կողմից «Վճռի վրիպակն ուղղելու» մասին որոշումը:*

***Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածի 6-րդ մասով***

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

*Հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Անահիտ Իսոյանի կողմից 02.12.2025թ. կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման «Որոշեցի» մասում նշված «Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ 20.01.2025թ.» ամսաթվի փոխարեն կարդալ 04.06.2026թ. ամսաթիվը:*

***Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:***

***«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:***

*ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԵՎ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱ ԳՆԴԱՊԵՏ՝* *ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ*